

ՊՈՍՏԱԼ

ՊՈՍՏԱԼ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ե Ի Կ

Թանոցումս «ոդր
20 սանիքով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

ИПРАВУНКЪ

Иправунк

ВАРНА

Իրոքորոշիւք եւս չեմ
տրոշիր

ՍԵՐ ՊՈՌՈՏԱԽՕՍՆԵՐԸ

Մեր անցեալ շաբաթ օրուան թուով Նոր-Դար էն արտապատ էինք ԱՀԱՌՐ ՆԵՆՆԱՆ խորագրին տակ Պագուէն գրուած նամակ մը որ հրատարակուած էր Րազմիթերթի 155 թիւին մէջ։

Այդ նամակը կը պարզէր թէ ինչպէս Պագուէն մէջ հայ մը թղթաւորի ժամանակ ծագած վէճի մը միջոցին՝ ամբողջական երկու ռուս սպաննած ըլլալուն պատճառով՝ ամբողջ ռուս դուռնաւոր դասակարգը Հայոց թաղը խուժած և հայկական նոր կոտորած մըն ալ սարքելու ցած յանգեցնուած ընդհանր է, բայց բարեբաղդաբար զօրքը և նահանգապետը հասնելով, զէնքի սպաննալիքին տակ հալու յովոյած են այդ ռուս բանուորները։ Ինչպէս գիտել կուտայ նամակագիրը, այդպէս անհատական վեճերը սովորական բաներ են, որոնք հաստատաբար տեղի կունենան ամէն ազգի պատկանող անհատներու միջեւ և երբեմն մէկ կամ երկու հոգի յանկարծ կը սպաննուին բայց ոստիկաններով կամ դատաւարութեամբ կը վերջանան։ Սակայն այս անգամ, երբ հայերը արդէն իսկաներու հետ կուտայ մէջ են, ռուս բանուորներն ալ այդ յարմար առիթ կը սեպեն, աննշան պատրուակով մը հայերը կոտորել ելլելու և նըշանակալից կէտը հոն է որ հայերը կոտորելու վաղորդները ռուս բանուորները կը լլան իսկ հայերը աղատողը ռուս կառավարութիւնը։

Արտասահմանի ընթերցող հայ յաւթեան յայտնի է թէ մեր յեղափոխական երկու կուսակցութիւնները, Հին Հնչակեան և մասամբ Դաշնակցական, տարիներէ ի վեր կովկասի մէջ իրենց գործունէութեան նպատակ ընտրած են հայ և ռուս բանուորներու մէջ համեմատութիւն և միութիւն առաջ բերել, և այս

նպատակաւ մեր ազգային բուն գաւառին տեսակետով ահագին զոհողութիւններ ըրած են, մինչև իսկ ռուս բանուորական յեղափոխական կուսակցութեան դրօշին տակ մտնելու, անոնց կանոնագիրը ու ծրագիրը ընդունելու աստիճան։ Եւ ինչպէս կը վկայեն իրենց օգնականները, շատոնց արդէն իբր թէ յաջողած են կովկասի բոլոր բանուոր դասակարգը, մանաւանդ ռուս բանուորը և յեղափոխական միացնել հայ բանուորին և հայ յեղափոխական կուսակցութեանց, որպէսզի միացեալ ուժերով յաջողապէս կուտին Չարիքի գէտ, անհատապարտութեան և անարդարութեան դէմ։

Մենք սկիզբէն ի վեր այդ ուսուցիչ խօսքերը և այդ առերեսութեան գեղեցիկ փրագները միայն վտանգաբեր պոռոտախօսութիւններ նկատած ու ըսած էինք թէ մեր յեղափոխական կուսակցութեանց այդ յայտարարութիւնները մեր բուն գաւառի օգուտ չը բերելէ զատ կովկասահայութեան աղէտաբեր կըլլան, և օր մը ռուս կառավարութեան առիթ կուտան որ ասկէ 5 տարի առաջ թուքաստանի մէջ իսլամ հասարակութեան դէմ ըրած կոտորածը կովկասի բազմահայ կեդրոններուն մէջ ալ ընէ։

Այս խօսքերը մարդարեւութիւն մը ըրած ըլլալու հաւանութեամբ չէր որ կը գրէինք, այլ համոզուած էինք թէ մեր ինքներուն յախուռն, անհեռատես ու սխալ գործունէութեան և սնամէջ պոռոտախօսութիւններուն անխուսափելի հետեւանքը այդ կրնար ըլլար առանց դրական օգուտ մը երաշխաւորելու։ Եւ ահա այսօր մեր այդ կանխատեսած կոտորածն է որ կը կատարուի թէեւ տարբեր ձևի մը տակ, բայց արդիւնքը և աղէտը նոյնն է. և սա առելի յատկանշական կողմեր ունի, կարծես պողպատեայ թաթերով ապտակելու համար այն կարգ մը շարլաթան հայ

դէմքերը, որոնք հայ հայրենասէրի դիմակով մտած են հայ յեղափոխական կուսակցութեանց մէջ իրենց ընկերակցական կամ սօսիալ-տէմօկրատական ու անիշխանական մտքերուն ծառայեցնելու համար Հայուն հայրենասիրութիւնը։ Այդ պոռոտախօսներուն և մեծ մասամբ արտասահման նստող և առաջնորդող այն որկրաբոյժներուն պէտք է հարցնել հիմա կերպը կովկասի մէջ հայ արիւնք կը հոսի, հայուն հարստութիւնը կը փճանայ, կայրի, կը թալանուի։

— Ինչու հայը չեն պաշտպաներ թաթար ոստիկաններուն և իսլամ խուժանին դէմ այն ռուս և վրացի յեղ. կուսակցութիւնները որոնց հետ մէկ գրօշի տակ մտածէք բռնութեան և անարդարութեան դէմ միատեղ կուտելու ուժով։

Ինչու իսլամ բանուորը կը ըսպաննէ հայ բանուորը որ շնացիօնալիզմը (ազգայնութիւնը կամ հայութիւնը) լքել ուխտած էր, ըստ ձեզ, իբր սօսիալ-տէմօկրատ։

Ինչ կըսէք հիմա Պագուէն սա ռուս բանուոր դասակարգին, այդ ձեր ընկերներուն, որոնք ոչինչ պատրուակաւ մը կը խուժեն հայոց թաղը հայերը կոտորելու թաթարներուն պակասը լրացնելու համար։

Դուք տակաւին երես ալ ունիք կովկասի հայուն ինքնապաշտպանութիւնը ձեր գործունէութեան վերագրելու, որպէսզի կըրկին խաբէք միամիտները, Չըլսեցիք թէ հոն ձեր անունին առնէք կարգացող և ձեր ընկերակցական եւ հակազգայնական մտքերուն վրայ թքնող Լալաեաններ, Անտոնովներ քաջաբար օրերով կուտեցան յարձակող թուրքերուն դէմ, ասոնցմէ տասնեակներով սատկեցուցին և իրենք հերոսաբար մեռան։

Լսեցիք արդեօք թէ ձեր ըսպաննած իսահակ Ժամհարեանի եղբայրները վակոններով ալիւր կը զրկեն մոխրի վրայ մնացած Շուշիի սովեալ հայերը կեղտակե-

լու և կը պատրաստուին ասոնց տուներ ալ շինելու։ Ոճրագործներ, կըմբռնէք ձեր ոճիւրին մեծութիւնը,

Եզրակացնելով. այն ամէնը որ տասնեակ տարիներէ ի վեր պատահեցան թուրքիոյ մէջ և այն բոլորը՝ որ կը պատահին այսօր կովկասի մէջ բնակող հայ ժողովուրդին գլխուն, դառն դասեր են, որոնցմէ պէտք է խրատուիլ գիտնայ մեր հասարակութիւնը և ճանչնայ ու զանազանէ տնաւեր ու շարլաթան յեղափոխութիւնը տնայէն և լուրջ յեղափոխութեան։

ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

Մէկ ճշմարտութիւն միայն կայ աշխարհի մէջ՝ նեղ ճամբայէն դնա՛, որ լայնը գտնես։

Անհատ մը, ազգ մը չի մեռնիր իւր սխալները խոտովանելով, բայց կը մեռնի զանոնք պահելով ու շարունակելով։

Ազգութիւնը պարիսպ է, կրօնը միջնաբերդ, երկուքն ալ թշնամութեան հրաւիրակներ սկզբէն ցայսօր եւ ցվեր։

Մարդիկ երկու բանի կը ծառայեն, շահու եւ կրքի, իսկ վերջին օրերու մէջ, կրքն թէ, անկողնոյ կը ծառայեն։

Բաց բերանէն գաղտնիք կելնեն, բաց դռնէն զողեր կը մտնեն։

Ինքն գովողը պատիւ չունի, զինքը գովողը խելք չունի։

Մէկ մարդ սպաննելը ոճիւր է, իսկ հազարաւորներ սպաննելը (պատերազմի մէջ) առաքինութիւն է, կըսէ քաղաքականութիւնը։

Քաղաքականութիւնը գունաւորեալ բարբարոսութիւն է։

Կինը չար է, մարդը բարի չէ, երանի չի ծնածներուն։

Առանց կնոջ կեանքը դառն է, բայց կինը կեանքէն ալ դառն է։

Կինը երկու զէնք ունի անէծք եւ արցունք։ Մէկը խաբուելու՝ միւսը խաբելու. զէպքին գործածական։

Աղջիկ մը երեք տարեկան յատկութիւն ունի զէժք. տարբեր եւ պատիւ, որոնցմով կարող է թէ իրեն տուն մը շինել եւ թէ ուրիշին տունը կործանել : Գինեքը այդ գործը վաղուց կատարած կըլլան :

Երկար ժամանակ այնպիսի կառավարեցին հաւատք, կին եւ կղեր, այսօր կը կառավարեն ոյժ, զէնք եւ շահ, վաղը պիտի կառավարեն խելք եւ բանասիրութիւն :

Մ. Պ. ՀԱՅԿՈՒՆԻ

ԲԱՆԱԽԱՆՈՒ ԱՆԵՐՈՒՄԸ

Բազուկ փետրուարական կոտորածը այնպիսի մի երեւոյթ չէր, որ տեղն ու տեղը բուռնէր եւ անյայտանար առանց հետք թողնելու : Նա մի ասակալի հրէն էր, որ ճարպիկ ձեռքերից մի տեղ բռնկուելով ջնջման, աւերածի կարմիր հեղեղով տարածուեց ամեն տեղ. քամիներն տարան նրան երեւան, Նախիջեւան : Եւ շուտ քաւառները : Նա կրկին հասաւ իւր առաջնայ տեղը մի երկրորդ եւ աւելի ուժգին բռնկուեց յայտնի բերդու համար : Դա մի շուրջ-կողմանի արիւնսովէ՛ ճանապարհորդութիւն էր :

Բազուկ երկրորդ կոտորածը սկսուեց այն օրը, երբ Եւրոպայի զէնք իրազարկութիւնն էր կնքուում օգոստոսի 20-ին շաբաթ օրը : Երեկոյան զէժ քաղաքից Բալասանի եկողները պատմում էին, որ ձիաքաջի գործադուր ճնշելու համար նրանց վրայ երթեւեկող զինուորական զորքի հրացաններ են պարպել փողոցների տակներէն, որից յառաջացած թնթիւ յուզումը իսկոյն վերջացել էր : Երբ ժամը 5-ի լուրերը հասան կոտորածի մասին, բոլորը հաւատացած էին, որ կրկին ձիաքաջի առթիւ եղած թնթիւ յուզումն կրկնութիւնն է ու շուտով կը վերականգնուի, բայց ո՛ւր. հետախուզող հասարակ զոյժը . . . կոտորած, կրկին կոտորած . . . Բաղաքից եկողները իսկոյն լիջեցին քաղաքի Սարգսն-չինեան կայարանի դուռները : — Կենդ կենդ միայն հայեր էին երեւում. կայարանի թուրքի խանութի առաջ նստել էին 15-20 անուանի թուրքեր, որոնք չըջապատել էին քաղաքի յայտնի Հաջին եւ Եղիարու էին զենացքի գալուստ նրան :

Բայց ուղեկցելու՝ Սարգսնչու օտոգնուած Մարգարեան գեղը : Մի օտարիկ անձնաւորութիւն ինձ պատմում էր, որ այդ ժամին թուրքերը ուղղակի սանձարձակ էին, հայերի հետ զրկելէ կտուր տնոյ խօսելիս յետ էին քաշում փեղերը եւ ցոյց տալիս արքունական ձեւի արձանաւանդներ : Երեկոյան թէ մեզ օտո եւ թէ քաղաքում խղճող անցող, սակայն այդ խղճողութիւնը չարագուշակ էր . . . ամեն ոք երեւակայում էր փետրուարական սարսափները եւ ներկայ ծանր դրութիւնը, չըջապատուած յայտնի թուրք գեղերով :

Կերակրին անցաւ խաղաղ, թէեւ դրութիւնը լարուած էր եւ յուզումն էր նկատուում բոլորի մէջ, որից եւ ամենքը սարսափը քորներում անկողին մտան : Բաղաքում հրացանաձգութիւնը շարունակուում էր իր-րեւ թէ ձիաքաջի զինուորների վը-

րայ, բայց իրօք ընկել էին մի քանի հայ ու թուրք : Դրութիւնը աւելի բարդանում էր :

Երկուշաբթի մինչեւ կէսօր առանձին բարձրութիւններ չեղան : Իսկ կէսօրից յետոյ կատարեալ իրարանցում տիրեց բոլորովին : Թուրքերը զատուեցան հայերից, թողնելով գործը սպառնական զինքեր բռնեցին, շաբեր գեղերը փակուել, ոմանք նորեւի հանքերում խմբուելով : հայերն էլ մերժեցին բանել եւ խմբուեցան կեղծոնական հանքերում : Երեկոյան զէժ Սարգսնչի գեղի մօտերից երկու հայեր հասան մեր գործարանը (Ռուսական ընկերութիւն «Նեֆտ») : Նրանք «Ռազու-գա» ընկերութեան բանուորներից էին, որոնք պատմեցին հետեւեալը. «Մեր կառավարիչը երեք օր է փակել է քաղաք մեզ անտէր թողնելով : Մենք ապրում էինք Սարգսնչիցի յայտնի կափարի տանը, սուր եւ փակուել էինք եւ ոչ ոք չը գիտէր մեր այնտեղ լինելը, Դոան ձեղքերից տեսնելով մօտ 10 քուս զինուորներ, քաղցից նեղուած գուրու եկանք եւ նրանց գիմեցինք, իսկ նրանք իրենց համար երկրից կրելով, հրաշտուել էին մեզ որ հեռանանք : — Այս նկատելով թուրքերը սկսեցին հալածել մեզ. «սաղի» ընկեր, հետեւի ինձ եւ վազեց եւ կտն քանի քանի ճակերի վրայից վեր ցատկելով, չը նայելով որ հետեւներէն գնդակները տեղում էին կարկտի պէս : Միւս ընկերներս օտոտան հոգի ետ դարձան, անպատեհ սպանուեալ լինին » : Ի նկատի առնելով վտանգը, հանքերի կառավարիչները սկսեցին ոտակաւապետից պահուպան զինուորներ պահանջել : Մի քանիսն յաջողուեց 5—10 զինուոր ստանալ, իսկ մնացածները ձեռնառնային մնացին, մեր ֆիրման նոյնպէս : Երկուշաբթի փողոցի ֆիրմաներից եւ խանութներից անդադար գիմուել էին զէպի մեր գործարանը : Երեկոյան ժամը 6-ին հասան եւ մեր Ռուսական գեղի սահմանում դառնուած նաւթահանքի ծառայողները ու բանուորները, որոնք ճանապարհին կտուր բռնուելով թուրք զինուած խմբերի հետ, մի մասը թողել էին ճանապարհին, իսկ իրենք շարունակ հրացան պարպելով զէպի հետապնդողները հասել մեզ մօտ : Յետոյ իմացանք որ ճանապարհին մնացածները տարուել են ոտակաւաւանուել եւ զինաթափ եղել : Արդէն միջով էր, երբ սկսուեցան հրդեհները Սարգսնչի գեղի մօտից : Առաջինը «Սոււչասանիկի» ընկերութեան հորերն էին, որոնց կրակը հարաւային քամին զէպի հեւեթ քշելով, վտեղ նաեւ կասպեան, Նեֆտ, Բօրն, Եիբա եւ ընկերութիւնների եւ այլ ֆիրմաների հորերը, ապա անցաւ Չաքրատ ու Բոմանի մասերը : Գիշերը Բալասանին երեք կողմից վառուում էր, ծխի մուրձ-կարմրագոյն քուլաներով պատելով չարագուշակ հորերը : Արեւան հոտ էր փչում . . . Սմբողջ գիշերը անքուռ անցկացրինք : Երեքշաբթի օրը հրաւրեալին քուլաները կրակների հոսանքները փոխելով վառեց Չաքրատի ու Բոմանի եւ Սարգսնչու ու Բալասանու մէջ դառնուած ասփարակի գրեթէ բոլոր հանքերը, այլ եւ Միքայելեանները եւ «Սոււչասանիկի» ընկերութեան բնակարանները : Այժմ արդէն համառարած ծխի միջից, երբ քամին բռնում էր արեղակի միջանոցները, երեք, ցից ցից երե-

ւում էին այստեղ ու այնտեղ հատիկ հատիկ, կամ թուով շատ փոքր վիշկաների խմբեր : Հրդեհից փոքր ինչ սպահով էին միայն Մանթաշեանի, Գիտոյի եւ Արամազդ ընկերութիւնների գործարանները ուր խմբուել էին շրջակայ մանր ֆիրմաների մարդիկ՝ հայ եւ ասու վրձակ եւ պաշտպանուել մինչեւ վերջ . . . : Հանքերի կետրոնը ազատ էր թուրքերից, բայց եւ այնպէս շարունակ չկար . . . երեւին միայն կասպեան ընկերութեան գործարանի մօտերը պայթեցնել էին լուրում, գրանք արձակուում էին գողուել հրդեհի ու լուրեսել աշխատող թուրքերի զէժ : Այդ օրը կարուեց Չուղուրիեան կոչուած ջրանցքը եւ ընդմիջա լուր հետախուզ : Մինչեւ լուրը հանքի վարչութիւնը շարունակ պահպան զինուորներ էր պահանջում ոտակաւապետից եւ մերձուներ բաւանում, վերջին ժամին նա հրամայել էր չմիջանել հետախուզ իւր հետ, ասելով որ «անկարող է, յոգնել է » : Հետախուզ լուրեցուց յետոյ, նամակ գրուեցաւ եւ խնդրուեցաւ գտնէ ժամանակով մի քանի պահպան զինուորներ ուղարկել կայարան փոխադրուելու համար : Իսկ նամակը որ երկար աղաչանքից յետոյ յանձն էին առնել տանելու՝ երկու օրս բանուորներ, կրկին յետ երեւեցաւ, որովհետեւ ոտակաւապետը չըջապատող կողակները չէին թողել բանուորներին մօտենալ, այլ քշել էին, ինչպէս բանուորները ասում էին նազայկաներով : Կրիտկաքան լուրէնք էին անցկացնում : Անպաշտպան, անյոյս, բոլորի աչքի առաջ նկատուում էր հրեշաւոր գողներով ծարրու ու սովի հեռանկարը եւ նրա կոռու միջոցաւ փակուելի մահուան ճիւղը : Երեկոյան զէժ զօրքեր հասան Բալասանի թողանութիւնը : 4 անգամ հազոյ թողանութիւնը լուրեցան-առաջին թողանութ է, արձակուեց Սարգսնչի գեղի վրայ : Միւս կողմից մի լուր հասաւ, թէ քաղաքի անուանի թուրքեր են եկել եւ հաշտութիւն են ուղում : Բոլորս էլ ցնծում էինք, յուսաւով որ վերջապէս կանցնին սարսափի օրերը. ջրանցքը կը բացուի, պաշտպանները կը պաշտպանուին . . . Ուսայն յոյսեր . . .

(Մնացեալը յաջորդով)

«ՆՈՐ-ԴԱՐ»

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԷ ՍԸ

[Ծառ. նախորդ թիւէն]

—Ներքեցէ՛ք որ փոխանակ ուղղակի ձեր հարցումին պատասխանելու, քանի մը խօսք ալ աւելցնեմ թիւ մը առաջըրած գիտողութեանդ վրայ :

Դուք անխտան էք եւ կը կասկածիք Երիտասարդ թուրքերու գործին կազմակերպութեան մը վրայ, բայց հաւատացէք ինձի որ ներկայիս այդ կազմակերպութիւնը գոյութիւն ունի. եւ քիչ չէ թիւը այն աղին ու անհաւանդիչ գործիչներուն, որոնք լուսամբ գաղափարի ծաւալումին կ'աշխատէին : Դժուար է նոր գաղափարներ ներմուծել անշուշտ ժողովուրդի մը մէջ որ չէ զառաքելուած եւ աստուանադրական ազատութեան վրայ դա-

դափար չունի : Բայց վերջապէս թուրքիոյ կառավարութեան եւ քաղաքականութեան մէջ փոփոխութեան մտքները համար ժողովրդային գորատոր յեղափոխութեան մը հարկ չկայ Սուլթանը անհաւաք մըն է եւ կը տօրենէ իր երկրին գործերը ինչպէս որ կամի : Ժողովուրդը կոյր, մոլեռանդ եւ նախապաշարուած կը համակերպի անոր տնօրինութիւններուն առանց առարկութեան, եւ եթէ վաղը յաջողիք առաջաւել Սուլթանը եւ նոր վարչութեան մը յանձնել կառավարութեան ղեկը, ժողովուրդը դարձեալ անտրտուն կ'պիտի համակերպի, որովհետեւ տակաւին իր իրաւունքներուն համար բողոքել սորված չէ :

—Հա՛ւ, լա՛ւ այն ատեն, միշտ կը լսենք որ Սուլթանը շրջապատող փաշաներէն շատերը զգոն են, եւ կառավարութեան մէջ փոփոխութիւններ մտնելու ջանադիր, ինչու՞ աւելին, քանի որ կարելի է, առանց աջակցութեան փնտրելու կաջութեան վերջ մը դնելու համար :

—Ընդարեւ է որ զգոն փաշաներ եւ պիշեր կան, եւ Երիտասարդ թուրքերու կազմակերպութեան պարագլուխներն ալ ընդհանրապէս կառավարական բարձրաստիճան պաշտօնատարներու աղաքներն են, բայց մի մօտեց որ Սուլթանն ալ իր գորատոր պաշտպաններն ունի : Երբ տրդէն առատօրէն վարձատրուած այդ Սուլթանին պաշտպանները քաջ գիտեն թէ վաղը օրինական հիմքու վրայ հաստատուած վարչութեան մը մէջ բացարձակ ոչնչութիւններ պիտի ըլլան, եւ անկարեւոր ու ասկական մարդուկներու կարգը դաստարածումը մը բռնակալութեան աշակցելով կարելին կը փորձեն որպէսզի ներկայ վարչութիւնը ու եւ չյառաջդիմաւոր յեղաշրջումի չ'ենթարկուի : Ասկէ զատ բոլոր այն յեղափոխական կազմակերպութիւններէն աւելի, որոնք թուրքիոյ մէջ կը գործեն, Երիտասարդ թուրքերու կազմակերպութիւնն է հալածուած, որովհետեւ ան է որ իրապէս, Սուլթանին ռճարագործ կառավարութեան հանդէպ ապագայ լուրջ վրտանդ մըն ալ կ'սպասուայ :

—Ուրեմն, որպէսզի Սուլթանին կառավարութեան մէջ արմատական փոփոխութիւններ տեղի ունենան, պէ՛տք է որ տարիներ անցնին :

—Կասահարար : Այս այժմ մօտաւոր ապագայի մը մէջ այդօրինակ յեղաշրջումի մը յոյսը չենք կըրնար ունենալ : Պարագանքներ անշուրպատ են :

—Սակայն չէ՞ք տեսներ որ թուրքիան հետզհետէ զէպի կործանուում կը քաշուտուի :

Բարեկամք զէժքն վրայ նշանակայից փայտ մը խաղաց :

—Կը կարծէ՞ք : Հաւատացէ՛ք, դուք հայերը մանաւանդ, տակաւին միաժամ երազներով կ'օրօրելիք : Թուրքիան թէեւ ներքնապէս բաւական քայքայուած՝ սակայն եւ այնպէս կործանումի վախ չունի : Եւրոպական կառավարութիւններու իրարու հանդէպ ունեցած խախտութիւններն ու շահերը, զօրաւոր երաշխաւորութիւններ են անոր գոյութեան պահպանումին : Այդ քրիստոնեայ կայսրերն ու թուրքաւորները մինչեւ որ Քրիստոնեայի պէս խորհելու ու գործելու յօտարին, արդէն մենք, յուսամ, ի վիճակի եղած կըլ-

շանք մեր երկիրը բարեկարգելու, եւ արդիւիւտ օտարները որպէսզի մեր կենսական շահերուն միջամեղէն հետի կենան : Իրակի մը շուրջ երեւացող ազգաւորութիւնը նմանին անոնք, թուրքիան մեռած չէ սակայն : ապագայ կեանք կայ անոր անժաղկ սրտին մէջ : Եւ յոյս ունիմ որ մենք կը յաջողինք, եւ երբէք թուրքիան եւրոպական միացեալ ուժերու գէմ պաշտպանելու դժբաղդաւորութիւնը չենք ունենար :

Գալով Երեսօտար թուրքերու պահանջներուն նկատմամբ ձեր ինձի ուղղած հարցումին, տհաւասիկ իմ պատասխանս :

Այն խորունկ առեւտրութիւնը զոր ներկայ ռազմական Սուլթանին հանդէպ կ'ըզանք, անսահման է : Հարկ է որ կառավարութեան գլուխը անցնի աւելի արդարաւէր, երկրին կենսական շահերուն գիտակցի, լուսավիտ եւ ազատասէր իշխան մը : Կրթական գործին զօրաւոր մղում մը տրուի : Ներկայ Սուլթանին շուրջ դարձող հացկատակ սարուկները եւ կառավարութեան պաշտօնատուներուն մէջ գործ ունեցող մակարոյժները, աքսորուին ու արտաքսուին անխորի : Գործի գլուխ կանչուին դատարարական եւ արժանիքի տէր անձեր, եւ եւս դարձուին բոլոր այն ազատամիտ փաշաները ու երիտասարդները որոնք կամ աքսորանքի եւ կամ արտասանմանի մէջ կը գտնուին : Ամեն բանէ աւելի յարգուի Միտհատ փաշայի սահմանադրութիւնը եւ փոյթ տարուի ժողովուրդին բարեկարգութեան եւ բարեբաստութեան : Վերջապէս կը բաղձանք ունենալ թուրքիա մը որ ազատ ըլլայ, ազա՛տ . . .

—Ազատ թուրքիա մը անշուշտ թուրքերուն համար միայն, ընդհատեցի եւ կատակի երեւոյթ մը տալով խօսեցի :

—Ո՛հ, ո՛հ, բայց, որոշապէս չը կրցի հասկնալ ինչ որ բոսի կուզէք :

—Ինչ կը խորհիք թուրքիոյ հրապարակազգութիւններուն՝ բայց մասնաւորապէս հայերուն վերաբերմամբ :

—Բոլոր հպատակ ժողովուրդներն ալ հարկ է որ իրաւունքով չափաւոր բարեկարգութիւններու իրենց բաժինը ստանան : Հողային բաժանումը բացարձակապէս անկարելի է, մանաւանդ Հայաստանը թուրքիայէն բաժնել, թուրքիան վճարապէս անդամաւել եւ անդամաւորուի պիտի ըլլայ : Պէտք է գիտնալ որ Մահմետական տարրը հոն մեծամասնութիւն կը կազմէ հիմա :

(Շարունակելի)

ՎԱՌՆԱՆՈՒՍԱՆՈՒՔ

ԱՆՅՈՐԴԻՆՈՒԹԵՐ

— 3 —

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

ՌՈՒՍԱՆՈՒՔ. —

Ինչպէս Պուլկարայ շատ մը քաղաքներուն, ազգ. գործերու նոյն անորոշութիւնը տեսայ նաեւ Ռուսիոյ : Եթէ նշանակելիք ներք մը դտայ արդարեւ արժանի Պուլկարայի հրապարակային երախտագիտութեան այն ալ Տ. Սարգիս Գու-

յունեանի իր անձնական քաղաքէն կառուցանել տուած հայ աղջկանց վարժարանն է, մանկապարտէզով միասին : Մենք Ռուսիոյ լիզգ. բարեարդ պետի կոչինք զինքը առանց շուրջ գտնուած ըլլալու մեր այս հրապարակութիւն մէջ, քանի որ տարին քանի մը անգամ իր աղջակաւորական ու բարեգործական զգացումներուն գործնական ապացոյցը կուտայ մեզի : Պուլկարայ մէջ մէկ հատիկ հայ վաճառականն է այն որ հանրային երախտագիտութեան արժանի ըրած է զինքը :

Պուլկարայի գաղթականութեան նման բազմակարգ գաղթականութիւն մը պէտք է որ Դուլուսմեաններուն հայ իր մէջը, քանի անոր հանրային հաստատութիւնները ունենորներու հոգածութեան պէտքն ունին : Մեր Պուլկարայի հարուստները կը կարծեն թէ տարին քանի մը անգամ իրենց ներկայացուած հանգանակութեան տեսարկներու 5/10 ֆրանքներ ստորագրելով, այդ ալ շատ անգամ տհաճութեամբ, կատարած կըլլան իրենց պարտականութիւնները : 5/10 ֆրանքներ չեն պարտիկ իրենց անտարբերութիւնը : Որուն շատ տրուեցաւ անկէ շատ կուզուի, այս է ամբողջ բարոյական վարդապետութիւններէ ճշմարիտ սկզբունքը :

Անցեալները Սթարա-Չակորայի ազգայիններու կրթ. նախարարութեան ըրած դիմումին որպէսզի 500 ֆրանքի օգնութիւն մը ընէ հայ ազգ. վարժարան մը բանալու հոտ իրենց զաւակներուն համար, ինչպէս իմացանք, նախարարութիւնը 200 ֆրանք միայն խոստացած է տալ : Հետեւաբար մնացեալ 300 ֆրանքի պակասը ստիպուած է անգործութեան դատապարտել միւր Սթարա-Չակորայի հայրենակիցները, քանի որ անոնք իրենց կողմէ կարելի եղած գոհոգութիւնը ըրած ըլլալով գործին անկարող զբաղուած են այս պակասը հետ լրացնել :

Սթարա-Չակորայի հայերու այս օգտակար ձեռնարկը ինծի նետ անշուշտ լսած ըլլալու են Պուլկարայի վաճառականներն ալ, արդեօք չէ՞ր կրնար անոնցմէ մէկը օգնութեան հասնիլ եւ պսակել սկսուած գործը : Մենք պիտի սպասէինք որ գոնէ իր կաշին «մեռած»ներէ հաստընող միլիոնացի բաղդաւոր «ֆիլման» միջակուկ ըրած ըլլար այս գոհողութիւնը քանի որ զարգացական արդիւնքներէ ան է որ կ'օգտուի աւելի իր վաճառատունը անոնցմէ լեցնելով. տան ճակատը շատ աւելի յարմար էր «վաճառատուն» բառին տեղ «վարժատուն» անունը :

Ամեն պարագայի մէջ կը սիրենք տեսնել Պուլկարայի անհատը հետեւած Տ. Սարգիս Գուլուսմեանի վեհանձն օրինակին : որպէսզի մենք ալ հաճաքը ունեցած ըլլանք տալ անոր աղին զգացումներուն արձագանքը :

Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

16 քիպ. 1905

Թ. Փաշարեզգ

Մեր շրջուն գործակալը այս օրեր կայցելէ Ռուսիոյ Սիլիստրէ, Պուլգորէշ եւ Բոնաթանցա քաղաքները : Ուստի կը խընդրուի այդ տեղերու մեր բաժանորդներէն որ այս առթիւ հաճին իրենց ներկայ տարւոյ բաժնեգրները յիշեալի վճարել :

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՔԵՐԸ

Փետրուար ամսէն ի վեր Կովկասի մէջ ստեղծուած եղբերական վիճակին պատասխանատուութիւնը զանազան եւ հակասական ձեւերով կը բացատրուի . այնպէս որ բուն հեղինակը անորոշ կը մնայ, թէեւ իրար յաջորդող դէպքերու ընթացքին մէջ իսլամներու խիստ վայրենի գործերը եւ զիրենք քաջաշիւղողներ ունենալին ակնհայտ են : Նաեւ սա շատ որոշ է թէ Կովկասի վերջին դէպքերը գլխաւորապէս արդիւնք են առաջին դէպքին, այսինքն փետրուար ամսոյն Պագուի մէջ հայոց եւ իսլամներու միջեւ տեղի ունեցած կռիւներուն : Հետեւաբար բուն պատասխանատուն կամ պատասխանատուները ճշգիւտ համար պէտք է որ Պագուի այդ առաջին դէպքին պատճառները փնտռենք : Այս մասին օտար եւ անկողմնակալ աղբիւրներէ ստացուած անհեկուսիւնները ճշմարտութեան աւելի մօտ կարելի է համարել. այս տեսակետով ուշադրութեան արժանի կը գտնենք հետեւեալ անհեկուսիւնները զոր տուած է, ըստ Հաւասի, Պագուի քարիւղի ռուսական ընկերութեան երկրաչափ Մաք Կալիւմ անունով անգլիացին : Այս պարունը Պագուի բոլոր դէպքերու ընթացքին հոն գտնուած եւ ահանառեւ եղած ըլլալէ յետոյ վերջին օրերու Բեդեբապուրկ գացած ու խմբագրի մը հետ ունեցած իր տեսակցութեան մէջ ըսած է .

«Կ'ըսուի թէ Պագուի կոտորածներուն առիթ տուած է յեղափոխական գոմիթէն, որ մեծաւ մասամբ հայերէ կը բաղկանայ : Այս գոմիթէն միայն քաղաքականութեամբ չի զբաղիր, այլ նաեւ գործաւորական խնդիրներով : Ան կազմակերպած էր գործադուլներ եւ աշխատած էր թափարներն ալ յեղափոխականներուն համաձայն շարժելու, որպէսզի ընդհանուր ապստամբութիւն հանեն Կովկասի մէջ եւ չլիթութեան մատնուին բոլոր օտարահպատակները : Թափարները մեծեցին շարժումին մասնակցելու, եւ կառավարութեան իմացուցին, խնդրելով որ թոյլատուի իրենց մարել դայն. կառավարութիւնը լիազօրութիւն տուաւ թափարներուն եւ ահա փետրուարի կոտորածները տեղի ունեցան որ արդիւնք էին այդ առաջնութեան :

«Անկէ ի վեր հայերը պատրաստուած են թափարներէն վրէժ յուծելու : Այս անգամ կառավարութիւնը գէնք տուաւ Հայերուն (1) յեղափոխական գոմիթէն ալ բոլոր հայերուն՝ որոնք գէնք կուզէին, տուած էր մէկ մէկ չքօհար եւ ռազմամթերք : Ընդհարումները Պագուի մէջ սկսեցին սեպտ. 2 թն. 300 թափարներ սպաննուելու հայերէն :

«Ամենասովորի օրը եղաւ Անգլիացուց համար սեպտ. 7 թն : Գործարարն պաշարուեցաւ 500 թափարներէ, որոնք կստիպէին գուր բանալ : Ըսուեցաւ անորոց թէ հոն միայն Անգլիացիներ կան . բայց թափար գործաւոր մը մատնեց թէ ներսը շատ հայեր ալ ապստամբած են : Թափարները ապստամբուն բոլորս ջարդել եթէ այդ հայերս չը յանձնենք : Հայերէն երկուքը յանձնեցինք, բայց թափարները այդ երկուքով գոհ չեղան եւ մասն գործարանին մէջ, Եւր գտան ուրիշ 12 հայեր ալ : Այն ատեն կատարեալ

պայանդարան մը եղաւ եւ չէ հայերը ջարդուեցան անհարազրել վայրագութեամբ : Յետոյ թափարները քաջուեցան երթալ կոտորելու եւ կողոպտելու համար հայոց թաղը :»

(Հաւաս)

Կովկասեան թերթերը փաստերով կը հաստատեն թէ վերջին կոտորածները սկսելէ քանի մը օր առաջ թուրքերը իրենց ընտանիքները ապահով տեղեր փոխադրած են, իսկ հայ թաղերու մէջ բնակող կամ խանութ ունեցող թուրքերը բոլորովին անդափոխուած են :

Կոտորածին յանցանքը հայերու վերաբերել զանազող թուրք ղեկավարներուն պատասխանելով «ՆՈՐ-ԴԱՐ» կրտէ :

Ուր որ հայերը մեծամասնութիւն են կազմում, կոտորած թալան տեղի չէ ունեցել : Կոտորածը յանկարծ սկսուել է Բագուում, որտեղ մահմետականները թուով աւելի շատ են եւ քաղաքի այն մասերում, որտեղ մի հայի դիմաց կարելի է մի քանիսն թուրք հաշուել : Կոտորածը շարունակուել է Հին-Նախիջևանում եւ սրա շրջակայքում, որտեղ նոյնպէս մէկ հայի դիմաց 10 թուրք հաշուել, եւ այն մէկ հայն էլ կամ կին է կամ երեխայ կամ ծերունի, որովհետեւ տղամարդիկ մեծ մասամբ օտարութեան մէջ են :

Ուրեմն հայերը խելագարուել են : Նրանք յարձակուած են հէնց այն վայրերում, այն քաղաքներում մահմետականներ զրալ, որտեղ իրենք թուով աւելի պակաս են եւ պարտութիւնը անխուսափելի է, իսկ այն քաղաքներում, որտեղ հայերը ստուար մեծամասնութիւն են կազմում, այնտեղ նրանք խաղաղ են մահմետականներին ձեռք չեն տալիս :

Օրինակ Ղարսում, օրինակ Ալէքսանդրապոլում, հա՛, Ալէքսանդրապոլում այդ քաղաքը զուտ հայաբնակ քաղաք է, մահմետական տարրը աննշան տեղ է բռնում : Է՛հ, որ հայերը կամենային վրէժ լուծել հօ կարող էին : Հաշիւը տեսնելու եւ փակելու համար մի ժամ կը բաւէր :

Ա. Զ. Դ.

Աղքատահիւս մեկ, Գործ. ժողովոյ հրապարակ հանած է հարսանեկան եւ սոնախմբութեանց առթիւ շնորհաւորական քառերի յնպատ քաղաքիս հայ կարօտեղոց, եւ կը խնդրէ պատուարժան ազգայիններէն որ հաճին գնել անոնցմէ փոխան հեռագրի որոնք կը գտնուին «Հայկական» եւ «Բարկէն Սիւնի» ընթերցարանները : Այս տոթիւ կը փութայ նաեւ յատարարել թէ՛ ժողովոյ գոհ պիտի լինի եթէ իր կողմանէ խրկուած շնորհաւորական քառերու փոխան արգոյ ազգայինք հաճին ըստ կամս գոմար մը հոգիւրի որով օգնած պիտի լինին

Քաղաքի քաղաքապետ հայ կարգապահ:
 Ի դիմաց Գործ. Ժողովոյ
 Առնապարտ Առնապետ
 Բ. ՊԱՆՃԵԱՆ Ս. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
 (Կնիք)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԳԻԱ

Սթանպոլ 20 սեպտ.— Ղալաթա-
 տա պորտա խանընտա 30 սենե-
 ան պերու աչքըլըդ իթմէք-
 աէ օլան 65 եաչընտա նշան նամ
 քիմէսնէ երլաղ թէտգըգաթ
 գամիսնը մախսուսըն էմրի իւզ-
 րէ, սեպտեմ. 14 տէ Ղալաթա-
 տա սէրտէսթ օլընտը: Իմզասըզ
 մէքթուպար պու սէֆիլ ատամը
 էն միւզիւր պիւր ֆէսատնը կէս-
 թէրմիշլէր իտի: Նշան թու-
 թուլընտա երլաղ կէսն-
 տէրիւտի վէ ալթը կիւն սօնրա
 անըն էօլիւսիւ մէմշանէտէ պու-
 լընտը: Բէվայթէ կէօրէ քէն-
 տիսի թէլէֆի նէֆա իթվէք
 մագսէտի իլէ օրատա պուլընան
 թէստի գըրուպ, անըն բարչասը
 իլէ քէնտի խըրթաղընը քէս-
 միշ: Տէօրթ հաֆթատան պէրու
 պու իքիւնի տիրքի մահպուստա
 թէլէֆի նէֆա իտէյօրլար: Իլք
 զուրպան մէքէղի մահպուստա
 նէտէ քէնտի քէնտիսիւնի պօղ-
 մուշ ըտը: Էրմէնիլէրէ գարչը
 ինրա օլընան չու թաադիպաթ-
 տան տօլալը սէֆարթէթանէլէր
 աիւշիւնմէյէ պաշլամըշ տըրլար
 պու սէպէպլէ տիբլօմաթիլէ միւշ-
 քիւլաթը հուսուլա կէլէճէք կէօ-
 րիւնիյօր:

Օթէլ Էրօքէրտէ, ճօնսըն
 խանէսինտէքի գուլուտա վէ Ա-
 ւստրիա խաթախանէսինտէ պօմ-
 պալարպուլընմասըն թիւրքհիւ-
 քիւմէթի կաղէթալարա րէսմէն
 նէշը իթտիւմէքլէ, թիւրք էհա-
 լիսին թահրիգ իթմիշ օլիյօր,
 վէ պու նէշըրաթլէ իլէրտէ էր-
 մէնիլէրէ վէ էճնէպիլէրէ գար-
 շը գըրկընլար հազըրլանիյօր
 զանն իտիլմէքտէ տիր: Ֆա-
 դաթ պուլընան մէքէրիւր պօմ-
 պալար Սուլթանա գարչը ին-
 րա օլընան գամթօնըն միւթէ-
 ճասըրլարը օլան Վահանաթլէ Բիւ-
 սէ ալիտ տիրլէր: Պու սըր-
 լարըն մէյտանա չըգմասը Վա-
 հանըն էվ սահիպէսի Ֆուկօլօ նամ
 պիր րում գատընըն իսպարը ի-
 լէ օլմուշ տըր: Պու գատըն նէ-
 ճիպ բաշա Մէհմէմէ վասիթասը
 իլէ 200 լիրա պաշիշ ալմըշ
 տըր:

— Պիր գաշ ալ մուգատտէմ
 Հօտէյտա սուլարընտա Արապ
 գուրսանլար էլի իլէ պաթմըշ
 օլան Սաւպուզ նամ ինկիլիզ
 վաբօրըն գըրմէթիւնիլէր թիւրք
 հիւքիւմէթի էօտէմէմիշ օլմաղ-
 լէ, իքի տէվլէթ պէյնիւնտէ միւ-
 նաղաա հասըլ օլաճագ կէօրիւ-
 նիյօր:

— Սեպտեմ. 20 տէ ալթը էլի-
 լէր թարապիտաա ֆրանսըզ սէ-
 ֆէրթէթանէսինէ թէճէմիւ օ-
 լննարագ, Մաքէթոնիւնըն մալի-
 յէսինէ էվրոքա գօնթօլը թէ-
 էսիսի իչիւն նէ. կէօնա թէտ-
 պիւրէր իթթիլապ իտիլէճէկի-
 նէ տալիւր միւզէքէրէ իթտիլէր:
 Մալիւմ օլտըզը իւզրէ, սօն տէ-
 ֆա Պապը Ալի ալթը պէօյիւք
 տէվլէթլէրին գօլէկիթի նօթա-
 սընա գաթիէն ճէվապէ րէտտ
 վէրմիշ իտի: Պու տէֆա տէվ-
 լէթլէր ճէպրէ միւրաճաաթ ի-
 տէճէքլէր զանն օլընիյօր:

— Չէթալարըն ալթիլաթը վէ
 թալիւրպաթը սէպէպլէ Մաքէ-
 թոնիւնըն քէք գարըշլը պիր
 հալաէ պուլընմագտա օլտըզընը
 օրատաքի էվրոքալը ժանտարմա
 զապիթլէրի տալի իթէրաֆ իթ-
 մէքտէ օլտըզլարընտան Աւըս-
 տրիւնըն Եհնի— Բաղար սանճա-
 ղընը զապթ իտէճէկի վէ ին-
 կիլիզ տօնանմասընը Սէլանիք
 էօնիւնտէ նիւմայիշ էյլէճէկի
 սէօյլէնիլիյօր: Նիւմայիլէք ին-
 կիլիզ տօնանմասըն ատէթի գա-
 տիմէսի իւզրէ իզմիր սուլա-
 րընտա սէնէլիք աշկըրիւտէ պու-
 լընուպ տահա իլէրի կիթմէ-
 միշ տիր: Գէզա Աւստրիանըն
 Եհնի Բաղարը իշլալ իտէճէ-
 կիւնէ ինանըմալօր, զիրա օ հալ-
 աէ Բուսիա տալի տիլէր պիր
 գըթալը զապթա գալթըշլը, վէ
 պու սէպէպլէ Շարք մէսէլէսի ա-
 լէֆլէնուպ, պէօյիւք թէհիլէք-
 լէր հուսուլա կիլիւր տէյօրլար:

Կ Ա Վ Կ Ա Ս Ի Ա

Երեւան 21 սեպտ.— Կէլէն
 չարչամպա կիւնիւ էրմէնիլէր
 վէ թաթարլար պէյնիւնտէ պիր
 գանլը միւտարէպէ վուգու պուլ-
 տու թաթարլարտան 16 էօլիւ վէ
 3 եարէլի: Էրմէնիլէրտէն 5 էօ-
 լիւ վէ 8 եարէլի վար տըր:
 Էրթէսի կիւնիւ պարըշլըլը օլ-
 տու: Փագաթ զէհիլէրտէն է-
 լան հիտտէթ թէպըին օլըն-
 մամըշ տըր:

Դալթէթ 21 սեպտ.— Էհալի հիտ-
 տէթլէնմիշ տիր: Պագու վու-
 գուլթընըն պուրատա տալի
 թէքրարլանմասընտան գօրգու-
 լիյօր:

— Նօվօէ Վոեմիւ մահուտ րուս
 կաղէթասը հէր կիւն Ֆիւնլատա-
 լըլարա, Բօլօնէզլէրէ, Եհնուտի-
 լէրէ վէ Էրմէնիլէրէ գարչը հիւ-
 քիւմէթի թէպիլգաթա տալթէթ
 իտէյօր վէ թաթարլարը Էր-
 մէնիլէրէ գարչը թէշլիք իլլէ-
 յօր: Մէքէրիւր կաղէթա սեպտեմ.
 23 թարիլիլի նուսիլէսիտէ Դու-
 շի գըրկընը թէլէֆիաթընըն
 աթիտէքի իսթասընը նէշը իթ-
 միշ տիր:

Էրմէնիլէրտէն էօլէնիլէր 548
 թաթարլարտան 104

Էրմէնիլէրտէն եարէլի 135
 թաթարլարտան » 48
 Եհնան Էրմէնիլէր 445
 թաթար » 37

Բ Ո Ւ Ս Ի Ա

Տուճատա ալա օլաճագ մէ-
 պուլարըն ինթիլապաթը իչիւն
 58 մատտէտէն իպարէթ պիր
 գաննուսմէ րէսմի կաղէթա
 իլէ նէշը օլընտը: քէզա պու-
 խուսուստա պիր Ուքաղ չըգ-
 մըշ օլտալ, ինթիլապլարըն
 պաշլամասընը էմր իտէյօր:

— Ինկիլիզ տէվլէթի Աօիա մէ-
 սէլէլէրի իչիւն վէ պա խուսուս
 Աճէմիստան վէ թիպէթ հազգըն-
 տա՝ Բուսիա իլէ պիր մուգալէ-
 լէնամէ թանգիլի իչիւն մու-
 խապէրաթտա պուլընիյօր ըմըշ
 Բուսիանըն չու Եօրիւն վէ քէ-
 րիշան հալիլիտէն իսթիֆատէ ի-
 տէճէք ֆըրսաթը պուլմուշ ի-
 քէն, Անատօլու մէսէլէսիլի տա-
 խի Եօլա գօյմագ իսթէսէլէր
 մէտէնիլէթ վէ ինսանիլէթ
 պէօյիւք խըստմէթ իթմիշ օ-
 լաճագլար:

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

Լահէյտէն վիրուտ իտէն պիր
 թէլէկրաթ իւզրէ, օրանըն տիբ-
 րօմաթ տալիլէրիլիտէ՝ իքիւն-
 ճի սուլըն ումուլի գօնթէրան-
 սը 1907 սէնէսինտէն էվլէլ
 թէճէմիւ օլընմայաճագ զանն
 օլընը ըմըր:

— Բուս— ճաբօն սուլհ ահտ-
 նամէսինի Միքատօ թաստիգ
 իթմէսինտէն սօնրա՝ պիւթիւն
 ճաբօն հարպ վաբօրլարընը,
 ճէման 200 ատէտ, թօքիօ ի-
 լիմանընա թէճէմիւ իթմէք
 իչիւն ալիլալ թօկօյա էմիր
 վէրէճէք պու միւնասիպէթլէ
 թօկօ մուգաֆֆէրիլէթ թէֆնէ-
 լէրի իլէ միւզէյէն՝ թանթա-
 նալը սուրութտէ վաթանընա
 ալտէթ իտէճէք վէ իմէրաթօր
 չախտէն տօնանմանըն ալտէթի
 զիյնէթիւնէ րէյասէթլէ ալթըշ-
 լալաճագ տըր:

— Բաբա տալի սուլհ գօնթէ-
 րանսընա պիր մուրախաս կէօն-
 տէրմէք էֆըքաթընտա պուլը-
 նարագ, իթալիա տէվլէթիւնտէն
 մուխալէֆէթ օլընմասըն իչիւն՝
 Ալմանիանըն մուալէնէթիւնէ
 միւրաճաաթ իտէճէք իմիշ:

— Գօյլիւն վաբօր տէրուհիւն-
 տէ 114 քիշի պուլուսուր իքէն
 Ֆիլիքին ատալարը սուլարըն,
 տա շէտիտ թաթարա թուրու-
 լուպ պաթմըշ տըր:



ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, ՉԱԽԻՐԷ	Սեպտ. 24
Վալիօն 54-60 լիպ.	9.40 / 10. 60
Արապա 52-62 լիպ.	8. / 11 40
ԱՐԲԱ,	
Վալիօն 100 քիւ ֆիւ	10. / 10. 40
Արապա 42-47 լիպ.	6. / 6. 60
ԵՌԻՎԱՅ արապա 33/36 լիպ.	4. 70/4.80
Վալիօն 100 քիւ	11. 20/11. 40
ՖԱՍՈՒԼԵՍ արապա 100 քիւ 24—30	
ԲԱԲԻՑԱ 100	19. 20 19.60
Արապա 100 քիւ	16—18
ՏՍՐԸ արապա	13/ 14
ԳՕԼՕՁ արապա 55-60 լիպ.	11./12.20
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	7. 80/7
» 100 քիւ	11.20— 11. 90
ՉԱՎՏԱՐ արապա	8. 60/ 8. 80
» 100 քիւ	11. 80 /12
Կիւնտէ 50—60 վալիօն	վէ 600—700
արապա կէլմէքտէ . վալիօն մուալէ-	
լէսի նաթօլէօն 20 ֆր. արապա մու-	
ալմէլէսի նաթօլէօն 20. 20	

ՍԱՐԲԱՅԻՑԷ

Նաթօլէօն 20, 20 ֆրանք	
Օսմ. լիրաը 22, 75 ալթուս ֆրանք	
ՊԱՍԼԻՑԷ	
Վարնա ընացասընտա պագալիլէ:	
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուս	
ֆրանք իլէ:	
ԳԱՂԷ	2.10/ 2.20
Շէֆէր նէմէ	73.
Շէֆէր քէսմէ) սանաղդ	36. 50
ԲիՐԻՆՃ ճէնօվա չուվալը	42
» Ֆիլպէ »	35.
» Ինկիլի »	28. 50
Բիգօ »	49.
ԿԱՁ Սանաղդ	12.
Չէթիւն եաղը քիւ	1.—1. 10.
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	25.

ԾԱԽԻԳԻՐԲԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
 » Բ. » (433 էջ) 2 ֆր.
 ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ անգամ տպագ-
 րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.
 ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-
 ներու նիստ ու կացը ու թուրքէ-
 կրած տառապանքը անոնց ազատու-
 թեան առաջ. Գին 50 սանգիմ
 ՀԱՅԵՆԻՔԻ ԶՈՋԵՐ Պատկեր-
 մը Տաճկահայաստանի իրական կեան-
 քէն: Չնդիւալ գին 1 ֆր.
 Այս գրքերը ստանալու համար զիմի
 ՎԱՌՆԱ. « Ի ր ա լ ու ն ք » ի խմբագ-
 րութեան
 ՍՕՖԻԱ Տ. Օննիկ Գարսիանի
 ՊՈՒԳՐԵՇ Տ. Օննիկ Փափաղեանի
 եւ Տ. Յ. Պիպէնցեանի
 ԳՕՆՍԹԱՆՑԱՆ Տ. Սիսակ Մէլքեանի
 ԳԱՂԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի
 ԱՂԷՔԱՍԵՆԻՐԻՍ Տ. Սահպան Մագ-
 մանեանի
 ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանզ-
 եանի
 ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի
 ՓՐՕՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պօղոսեան
 Ա.ԶԻ
 Գոլթեպան—Երեստաարդ մը որ ըն-
 թացաւարտ եղած է նաեւ Ամերիկեան
 բարձրագոյն վարժարանէ մը, իր պա-
 րագոյ ժամերուն տրամադիր է մաս-
 նաւոր դասեր աւալ Անգլիէրէնի:
 Պայմաններու մասին խմբագրութեան
 դիմել:

Ожогорникъ А. Курбетиянъ
 печатница Д. Тодоровъ и С. не—Варка